2024Թ.-Ի ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ ՄՐՑՈՒՅԹԻ

ԽՆԴԻՐ

Կազմակերպությունն ստեղծվել է 2023թ.-ի հունիս: Կազմակերպությունը զբաղվում է մարամեծածախ առևտրով և արտադրությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում կատար է հետևյալ գործարքները.

Եկամուտներ

h/h	Գործարք	գումար	գումար
1	Ապրանքների իրացումից եկամուտ (առանց ԱԱՀ)	240 000 000	240 000 000
2	Տոկոսային եկամուտ	6 200 000	6 200 000
3	Վարձակալությունից եկամուտ	22 000 000	22 000 000
4	Պարտավորության ներումից եկամուտ	16 000 000	16 000 000
6	Նախկինում դուրսգրված դպ պարտքի վճարումից եկամուտ	3 000 000	3 000 000
7	Արտարժույթով արտահայտված մնացորդների վերագնահատումից եկամուտ	2 800 000	-
	Անհատույց ստացված ակտիվներ		2 000 000
	Ընդամենը	***290 000 000***	***289 200 000***

Ծախսեր

h/h	Գործարք	գումար	գումար
1	Մատակարարված ապրանքների ինքնարժեք	215 000 000	215 000 000
2	Աշխատավարձ	18 000 000	23 400 000
3	Ֆիզիկական անձանց վճարված օգնություն	4 000 000	723 000
4	Անհատույց ստացված ակտիվների իրացումից ինքնարժեք	2 000 000	2 000 000
5	ՄՀ մաշվածություն	22 000 000	22 000 000
6	Տոկոսային ծախսեր	3 000 000	2 000 000
	Գործուղում		6 000 000
	Ընդամենը	***264 000 000***	***271 123 000***

Լրացուցիչ տեղեկություն՝

1. Վարձակալության տրամադրված շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը կազմում է 400 000 000 ՀՀ դրամ,

2. Ծախսերի 4-րդ կետով նշված անհատույց ակտիվների մասով առկա է Հարկային օրենսգրքով սահմանված կարգով ստացված հարկային հաշիվ,

3. Ծախսերի 6-րդ կետով նշված տոկոսային ծախսերը ստացվել են ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից,

4. 31.12.2023 թ.-ի արդյունքներով կազմակերպության սեփական կապիտալը կազմել է 1 000 000 ՀՀ դրամ,

5. Աշխատավարձի 20% տրվել է հաշմանդամ աշխատակիցներին,

6. Կատարվել են գործուղման ծախսեր 6 000 000 ՀՀ դրամ

Որոշել

Որքան կկազմի կազմակերպության 2023թ.-ի շահութահարկը:

Պատասխան՝

289 200 000 - 271 123 000 = 18 077 000

18 077 000 * 18% = 3 253 860